ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՈՌԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/117 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Մարմնամարզական պատ – Հենարանային կանգնակները պետք է պատրաստված լինեն պինդ սոճուց, աստիճանաձողերը՝ պինդ հաճարենուց, թխկիից կամ պինդ կեչիից: Մարմնամարական պատի բարձրությունը պետք է լինի 2000մմ, լայնությունը՝ 850մմ, վերին հատվածի խորությունը՝ 240մմ, և, 110մմ՝ մնացած բարձրության երկայնքով: Ուղղահայաց կանգնակների հատվածքի չափերն են՝ 110x35մմ: Աստիճանաձողերը պետք է լինեն օվալաձև Φ30x40(h)մմ չափերի: Աստիճանաձողերի միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 170մմ: Աստիճանաձողերի առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է լինի 80կգ: Ստորին ձողը պետք է տեղակայված լինի հատակից 150մմ բարձրության, իսկ վերին ձողը պետք է լինի 70մմ առաջ մյուս աստիճանաձողերի համեմատ: Վերին ձողը պետք է ունենա կլոր հատվածք՝ Φ30մմ տրամագծով: Այն նախատեսված է ձողան օգտագործելու համար: Վերին ձողանի հեռավորությունը ներքևի աստիճանաձողից պետք է լինի 250մմ: Վերին ձողանը պետք է լաքապատված լինի բարձրորակ խոնավակայուն և չսահող լաքով: Աստիճանաձողերի ամրացումը չպետք է լինի մեխով կամ հեղյուսով: Մարմնամարզական պատի բոլոր ամրացումները պետք է իրականացվեն բարձորակ և ամուր դետալներով՝ հաշվի առնելով մարզադահլիճի առանձնահատկությունները, հատակին հպվող մասի տակ լինեն ռետինե դետալներ և դիմակայեն առավելագույն ծանրաբեռնվածության հանրագումարին: Ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված: Չափաբաժնի համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների

	փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Մատակարարի կողմից: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել գնորդի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել գնորդի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГОРА ГРУПП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/117 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	